

Ն Ի Ժ Ե Ի Ա Ր Է Լ

ԽՐԺԿԱԳՐՈՒԹԻՒԱՆ ԱՐԴԱՐԱՍ ԿԱՏԱՎՐՈՒՄ

Օրհական դպրոցն Նիժու, իւր առաջին տարուայ շրջանը լրացնելով՝ երկրորդ տարին մտնելու բաղտաւորութիւն ունեցաւ. արդարեւ բաղտաւորութիւն ստեղծու իրաւունք ունիմ, որովհետեւ շատերը թէ նոյն բնակիչներէից, և թէ՛ ուրիշները՝ յոյս չունէին որ դպրոցը մի կամ երկու ամսից աւելի շարունակելու է անվրդով իւր զեղեցիկ ընթացքը՝ Խնամատար Հոգաբարձուաց աշխատասիրութեամբ. ես իմ զիտողութիւնս տեղական բնակչաց վերայ այսպէս ունիմ, թէ՛ նոքա տգիտութեան և անուսումնութեան հարկից ստիպուած, կուրորէն խորխորանների մէջ էին զորովում ակամայ կամօք, իսկ այլոց վերայ այլ իմն եղանակի. Աւերոյիշեալ դպրոցը այժմ իւր երկրորդ շրջանի մէջ՝ ևս քան զևս յառաջադիմութեամբ պէտք է փայլի, փասն զի ուսման ճաշակը արդէն սակաւ ինչ սոսա՞ծ են մեր Նիժու ազգայինը։ Աշակերտաց թիւը որ աւուր աւելանում է՝ և բաւական յառաջադիմութիւն է գտնվում աշակերտաց մէջ, և հոգաբարձուք ազգասիրարար խրեանց հոգացողութիւնը կրկնապատկել են դպրոցի վրայ՝ նորա բոլոր կառավարութիւնը բարեկարգութեան մէջ դնել։

Միւս շրջակայ բնակիչները տեսնելով նոցա փայլը և հոգը, և ուսման յառաջադիմութիւնը, նոյնօրինակ ընկերական միարանութիւն կազմելու վրայով խօսակցութիւններ է լինում, ինչպէս այժմ Արեւու մէջ՝ քանի մի ազգասերք ուսման եռանդով փառուած ի զուրհ հանեցին իրանց զիտաւորութիւնը դպրոցի բացման համար, և արժանացան Ա. Ե. հաստատու Վաստիպա Վաստիպա օրհնութեան Կոնգրակաւ օրհնուելու։ Նրբ նոր ի նորոյ՝ ուսման եռանդը արժարձվում էր ժողովրդաց մէջ՝ այս զեղեցիկ գործի ընթացքին խափանարար լուրեր հնչեցնող որպէս թէ՛ դպրոցը նիւթական միջոցներ չէ՛ ունենալու իւր յաջողակ յառաջադիմութեան համար, և թէ՛ ժողովուրդը դպրոցաց կառավարութեան մասին՝ միանգամայն ունենալու է հոգևոր արդիւնքն. Ես ևս լսելով բաւականին զայլմակողուած արհամարհում էի նոցա զիտաւորութիւնը՝ ունեցողի լինելով անհաստատ ձայներու որ նոքա եկեղեցական կառավարութեան նիւթական միջոցին, որպէս թէ՛ հարուած հասցնելու, զիտումն ունին, և պարսաւում էի զիտաս մեղադրանքը. բայց այժմ տեսնում եմ, որ ամենը ազգին սիրտը և ոգին պղտորող՝ և ազգայնոց եռանդը ցրտացնող ձայներ են եղել, հակառակ գաղափարի տէր անձներից յառաջացած, փասն զի անհասարկ է նկատել կամ զոնէ մտքէ անց կազմել այդպիսի այլ ընդ պէջ միտքեր, մեր սիրելի ազգային եղբարց մէջ։ Կրկնորեմ Արդարտ ամսագր-

րից իմ այս նամակը տպագրութեամբ հրատարակելու արժանի համարի՝ ի խրախոյս մեր Նիժու բարենախանձ ժողովրդաց և ազգասեր հոգաբարձուաց։

Յ. Արեւուստի

Ի 10 Ն Արեւի 1871 - 4  
Ի Գ Ն - Ի Ի

Ք Օ Փ Ա Ռ Լ Ի

ԽՐԺԿԱԳՐՈՒԹԻՒԱՆ ԱՐԴԱՐԱՍ ԿԱՏԱՎՐՈՒՄ

Ի վաղուց հետէ սիրտս մի անհամբեր տենչանք լցուած հրապարակաւ կամենում էի յայտնելու իմ ուրախառիթ զգացմունքը. բայց գործոց անընդհատ զբաղմունքը արգելադրութիւն էր լինում շուտով կատարելու այդ վերջապէս գտայ այս բարեսպասն ժամը, որի մէջ իմ հետաւոր եղբարցս ի լուր ահա յիշում եմ այն ի վաղուց զգացածս բերկրառիթ ցնծութիւնը, որին նոքա ևս հաղորդակից լինին։

Անմահ բնութիւնը տեսանելով մեր թշուառ Ազգի խղճայի գրութիւնը, պարզեց նորան Գէորգ Գ. Սրբազնասուրբը և Աւսումնասէր Հայրապետը Ա. Ե. Հայրը Գահը բարձրանալուց հետէ անգուլ և անդադար աշխատում է լրացուցանելու նորա ամենահարկաւոր կարիքը, այն է Աւսումնական պակասութիւնը։ Քաղաքների Աւսումնարանների բարեկարգելուց զկնի այժմ զիւղիբը ևս յետ չեն մնում այդ կարևոր գործից, ինչպէս հսկողագէտ սուրբ Հովոսի բարի կամօք անցեալ նոյններանոց մէջ իրագործուած տեսաւ նոյն առաջնական գործը Հիրակվանու Թօփառի զիւղը ևս։

Հարկէ Ա. Ե. հաստատ Հայրը լաւ է հասկանում թէ ինչ է նշանակում "լաւ է անուն բարի քան զմեծութիւն աշխարհի" սասած բանը, և իսկապէս այդ զիտաւորութեամբ իւր ամենաբարձր և զժուարատար պաշտօնը բնորոնելուց հետէ աշխատում է տիւ և զիշեր անքուն հսկողութեամբ։ Արդէն ժրջան երկրագործը սերմանում է մեծ քրտնաթոր աշխատանքը, բայց ամենաստեղծն Աւստուած անվարձ թողնելու չէ իւր ամենատաա գրթութիւնից, անշուշտ իւր սերմանածը կատարելագործած տեսանելով՝ ուրախանալու է շատ։

Միևնոյն սերմերից բնկնելով Թօփառի Հայազգի ժողովրդականաց մէջ, պտղաբերութեան արգասիք ունենալը, այժմէն ակն յանդիման երևում է, որ բաց արեցին Աւսումնարան երկու սննեակից բաղկացած, բերել տուին նաև ուսուցիչներ, չեմ մոռանալու նոյն զիւղացուց մանաւանդ Տանուտէր Գ. Մանուկ Արրահամեանի և նորա օրգի Բարեկրօն Սարգիս քահանայի աշխատութիւնը, որոնք հայում են Ա. Ե. հաստատի բուն նպատակին, արգօրե կովութեան արժանի են։

Արջ տարով նամակիս խնդրում եմ երկար կեանք Անհատու սուրբ Զօրք մշտապէս իրագործելու իւր ազգասօգուտ նպատակները, ձեռամբ բարեկրօն Հոգեւորականաց և բարեպաշտ իշխանաց:

Նախարարին Տախտիսի Յարմարի  
Նախարարին

16 Ապրիլ 1871

ՅԱԳԵՒՆՆԵՐԻՆՆԵՐ:

Օ Շ Ա Կ Ա Ն

Խաբարներու մասին Արարատ Անտիպոստի

Այս գիւղը՝ համարեալ թէ մեր ազգութեան պէս հնութեանց մայր կ'հաշուի ի մէջ ամենայն գիւղօրէից: Կանուանի սա Օշական, արդարև համաձայն իւր անուանակոչութեան երանի աչաց նոցա՝ որք կ'տեսանեն այս գրախտաւայր գիւղը. ազգասէր անձանց հայրենեաց հնութիւնք ցոյց տալու համար՝ սա մէկ անջինջ արձան կանգնած կայ Հայաստան աշխարհին՝ ի մէջ համայն գիւղօրէից: Հայրենասէր անձք կարող է քաղցր և անորձ նիւթերով մի ամբողջ գիրք յօրինել սորա բոլոր հնութիւնից, ուղիղ ստորագրութեամբ Այս գիւղը շինված է Քասաղ գետի հիւսիսային ձորաբերնին: Սորա արևելեան կողմն կ'գտնուի Գիտանոց անուանեալ բլուրը, որոյ գագաթից զիտող անձի աչաց առաջ կ'պատկերանայ Արարատեան ալիւնավայր զաշտը, կ'երևին Ս. Էջմիածին և միւս վանօրայք, կ'երևի նոյնպէս Քասաղ գետի հեղասահ քաղցր պտոյտով երթալը տեղոյս ձորերի միջէն և ընկերանալը Մեծամօրին գետի հետ՝ և ի միասին հիւր լինելը գրախտաբուրիս Երասխ գետին. այս բլուրոյս ստորոտին է գիւղիս գերեզմանոցն. այդիքը կ'գտնուին կից գիւղին դէպ ի արևմուտ և հիւսիս, որոց երկք կողմն պատանձ է ձորով: Այս գիւղի արևելեան մասի մէջ կ'գտնուի բազմաշխատ Երասխի Մերովք Թարգմանչի գերեզմանը. որոյ Եկեղեցին բողբոջին անշուք գրութեան մէջ է, որոյ ամեն կողմից երկնաբերձ որմերը քակուած շատ տեղեր մեծամեծ ճեղքուածներ բացուած և կիսակործան որմոց անկիւններով երայ արայիկներից շինուած որմեր և նոցա աղբերով նորին շքերութիւնը տեղագրած կայ. տեղոյս բնակիչները որչափ կարողութիւն ունեցել են՝ առանց խնայելոյի գործ են դրած՝ իւր շինութեանէն ԿԿԿ թուէն մինչև ցայժմ, և Ս. Էջմիածինն միշտ օգնութիւն է արած նոցա՝ բայց միով բանիւ պարտական են Հայոց, Արաց և Աղուանից ազգերը, որոնք իւրեանց գրաւոր լուսաւորութեան առիթ կողք բազմերախտ Թարգմանչի գերեզմանը այսպիսի անշուք և աննշան գրութեան մէջ կ'պահեն՝ եթէ մի օտար Ազգ՝ երբ տեսնէ Ս. Եկեղեցիս Մերովքայ այս-

օրին, նա ախտսեղով անարգանք պիտի չկարգայ այս երկք ազգացս . . . . կ'թողուի նրբաբնին դատողութեան ճշմարտասէր բանադիտացող:

Եկեղեցւոյս հարաւային դռան հանդէպ կ'գտնուի նորաշէն Մերովքեան Աւսումնարանը, երկյարկեան շինուած. ունի ըլ գարձակ պատշգամբներ հիւսիսային և հարաւային կողմերին. խիստ զուարճալի տեղ է այս Աւսումնարանը, վասն զի հարաւային կողմից մտնէ Քասաղ գետի ձորաբերանը, որ տեղից գետի քաղցր խոխոջիւնը և թուչնոց ոգեշարժ երգերը մէկ ուրիշ աշխոյժ կ'նուիրէ աշակերտաց անմեղ սրտերին և անոյշ զեպիւռն էլ իւր կենսացութիւն զովութիւնը նոցա բաշխելն չի գաղարկուի բաւականաչափ աշակերտը, նոյնպէս և ուսուցիչ: Նորքեցի Սիմեոն Աստուածատրեան, որ է եկած այս մօտիկ օրերիս, բայց ախտս . . . .

Ամսոյս 17ին եկին մի քանի հայրենասէր պատուաւոր անձինք, որոց անուանքն են Քարբիէլ Սմբատեանց Նախիջուանեցի, Միքայէլ Տէր Արրահամեան և Միսակ Բզուռնի, որոնք շատ մանրամասնաբար Եկեղեցւոյս հնութիւններին տեղեկանալէն զինի՝ եկին ուսումնարան. և բաւականաչափ հարցաբնութիւն արին աշակերտաց և գտան յառաջագէ՛մ իւրեանց Հայոց և Ռուսաց ուսանելի առարկայից մէջ, և ապա սկսեցին երգ երգել տալ, որոնք երգեցին ուսումնասէր բարեշնորհ Սըմբատեանց Մերովք վարդապետի յօրինած երգը, որ համարեալ թէ ամենն էլ բերան գիտէին. զոր արժան կ'համարիմ՝ ընդ սմին զրել ամբողջապէս: Յետոյ շնորհակալութիւն մատուցին Հոգաբարձուաց և կ'ինն զուրս. բայց ձանապարհին շատ ցուելով խնդրեցին նորանցից հոգ տանել արժանաւոր ուսուցիչ գտնելու. սասց նոցա այս հետեւեալ խօսքը. Պ. Հոգաբարձու Մկրտիչ Տէր Մերովքեան Մօրիկեանց, Միքայէլ՝ մերուս մնարանը մեծայոյս եմք որ Նորին Անհատութեան շնորհի օրրատօրէ պայճատ անալու է, և ունի բերել տալ Նորին շնորհի արժանաւոր ուսումնագէտ և լեզուագէտ ուսուցիչ. որով մեր զաւակները փոքրինչ ուսման քաղցր անորձակը առնելով կ'տեսնենք նոցա վերայ մէկ ուրիշ քաղաքական շնորհք փայլած, վասնորոյ և մեք չենք զյանալ մեր կամաւոր հոգաւորութիւնը նորանցից: Ո՛հ այս սրտաւոր խօսքերը շարժեցին սիրտս և առիթ եղան համաճօտակի խօսելու Մերովքեան Եկեղեցւոյ և Աւսումնարանի վերայ, զբս խնդրեմ ընդունել յէջս պատուական Արարատ լրագրոյց:

Գ. Ե. Կ. Տ. Յարմարի-Նեան Մօրիկեանց

Ի 24 Ապրիլ 1871 - Է

յՈՂԻՄ